ՀՏԴ 591.5

ՃԱԳԱՐԱՄԿՆԵՐԻ (DIPODIDAE) ԸՆՏԱՆԻՔԸ ԼՂՀ ՏԵՐԻՈՖԱՈՒՆԱՅՈՒՄ

Վ.Տ.Հայրապետյան
կենսաբանության ամբիոն

Այս կենդանիները կրծողների կարգի յուրօրինակ խումբ է, որոնք մկնակերպերի և ցատկամկների վերնաընտանիքի հետ միասին կազմում են Dipodidae ընտանիքը (2,3):

Ճագարամկները ունեն առանձնահատուկ տեսք, հետին վերջույթները բավականին երկար են և ուժեղ, իսկ առաջինները՝ կարճ: Նրանք դանդաղ քայլի ժամանակ քայլում են չորս ոտքերով, արագի դեպքում՝ երկու հետին ոտքերով, ցատկումներով: Հետին վերջույթներն ունեն ամուր ու երկար ճանկերով հինգ մատ, առաջինները ևս հինգամատ են:

Պոչը երկար է և գերազանցում է մարմնի երկարությանը, ավարտվում է սև ու սպիտակ երկար մազափնջով: Պոչը ծառայում է նաև որպես հավասարակշռության օրգան, ցատկումների ժամանակ այն պահվում է ուղիղ, պոչածայրը փոքր ինչ դեպի վերև: Ականջները խոշոր են, ծայրում վառ արտահայտված կլորավուն, այն ունի նոսր մազածածկ, փախուստի ժամանակ ուղղում է դեպի մեջքի կողմը:

Նրանց մարմնի մեջքային մասերն ունեն դեղնագորշա մոխրագույն, կարմրադարչնագույն գունավորում, իսկ որովայնային հատվածը և պոչերի ծայրերի մազափունջը՝ սպիտակ: Ազդրերի վրայի գոտիները և թաթերի ծայրերը սպիտակավուն են: Արցախի կրծողների ֆաունայում տարածված ճագարամկների համար գունային բազմերանգությունը պայմանավորված է նրանց բնակավայրերի էկոլոգիական առանձնահատկություններով: Նրանք բնակություն են հաստատում Մարտակերտի, Մարտունու և Հադրութի կիսաանապատային (ծ.մ. 250- 500 մ) և լեռնատափաստանային (ծ. մ. 1100 մ) գոտիներում:

Կիսաանապատային և տափաստանային գոտում բնակվող ճագարամկների մեջքային մասը դեղնագորշամոխրագույն երանգ ունեն, իսկ լեռնատափաստանային գոտում բնակվողները ունեն կարմրադարչնագույն երանգ: Հարկ է նշել, որ կախված բիոտոպերից կամ բիոցենոզներից գունային երանգը կրում է նաև պաշտպանողական բնույթ:

Ճագարամկները գլխերային կենդանիներ են: Օրվա լուսավոր ժամերին թաքնվում են իրենց կառուցած բներում, հողով խցանելով մուտքը: Բների կառուցման համար նախընտրում են քարքարոտ և ամուր գրունտով վայրեր:

Սովորաբար ճագարամկները կառուցում են երկու տիպի բներ պարզ-ժամանակավոր և հիմնական, ամառային և ձմեռային, ավելի բարդ ու խոր: Հիմնական բներում 40- 60 սմ խորության վրա կառուցում են մեկ կամ մի քանի բնային խուցեր:

Մեր հետազոտության օբյեկտ են հանդիսացել ճագարամկների – Dipodidae ընտանիքի, գետնաճագարամկների-Allactaga ցեղին պատկանող կենդանատեսակները: Հետազոտությունները կատարվել են ԼՂՀ- ի վերը նշված շրջանների կիսաանապատային, լեռնատափաստանային գոտիներում: Ուսումնասիրությունները կատարվել են տարվա տարբեր ժամանակներում, դիտարկումների ձևով:

Կենդանիներ որսալու համար օգտագործել ենք տարբեր բնույթի թակարդներ, որսած կենդանիները ենթարկել ենք մորֆոմետրիկ չափումների: Հետազոտությունների հիմնական նպատակն է եղել կատարել ճագարամկների տեսակային կազմի վերաքննություն, նրանց որոշ վարքագծային և էկոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրություններ:

2002 թվականից առ այսօր ԼՂՀ կենդանական աշխարհում հայտնաբերված են հնգամատ ճագարամկների (Allactaga F. Civeri, 1836) ցեղի երկու տեսակ՝ փոքրասիական կամ լեռնային

ճագարամուկ – Allactaga williamsi Thomas, 1897, և փոքր ճագարամուկ – Allactaga elater Lichtensteni, 1825.(1,4): Սակայն, պետք է ասել, որ չի ժխտվում այլ տեսակների առկայությունը:

Այս կենդանիների մոտ մշակված է բարդ վարքագիծ: Նրանք վարում են զուտ գիշերային կենսակերպ: Բները ունեն երկու մուտք, մեկը՝ պահուստային, որտեղով վտանգի դեպքում հանկարծակի դուրս են նետվում և մեծ արագությամբ (ցատկումներով) դիմում փախուստի: Բներում ապրում են միայնակ, նույնիսկ ավազամկների հարևանությամբ:

Ձագերի խնամքը տանում է մայրը, վտանգի դեպքում արագ տեղափոխում է ձագերին, անգամ սատկած ձագերին: Ձագահանության ժամանակ վերանորոգում են բները: Ձագերին կաթով կերակրում են մոտ 35-45 օր: Ձագերը դառնում են ինքնուրույն 2,5 –3 ամսականում, իսկ երկրորդ տարում դասնակցում բազմացմանը (1):

Հղիության տևողությունը 27-30 օր է: Սերնդում ունենում են 1- 6 ձագ: Բազմացումը տեղի է ունենում ձմեռային քնից անմիջապես հետո, գարնան առաջին ամսվա կեսերին: Տարվա մեջ բազմանում են 1-2 անգամ: Այս կենդանիների ձմեռային քուն են մտնում նոյեմբերի կեսերից մինչև մարտի կեսերը:

Ճագարամկները ունեն բարձր էկոլոգիական ճկունություն, որն էլ հնարավորություն է տալիս նրանց հարմարվել կիսաանապատային գոտու դաժան բնակլիմայական պայմաններին: Նրանք սնվում են բույսերի վեգետատիվ մասերով, սոխուկներով, արմատներով, սերմերով, հումախ էլ միջատներով և նրանց թրթուրներով:

Այս կենդանիները մեծ ակտիվություն են ցուցաբերում գիշերվա առաջին կեսին: Որտեղ նրանք խիտ են բնակված, մեծ վնաս են հասցնում գյուղատնտեսությանը, փչացնում են ցանքերը, բանջարանոցները: Հանդիսանում են ժանտախտի հարուցիչի կրող (4):

Ճագարամկների բնական թշնամիներից են աքիսը, քարսկզբիսը, խայտաբիսը, աղվեսը, գիշերային կենսակերպ վարող գիշատիչ թռչունները:

Ամփոփում

Հետազոտությունների արդյունքում ԼՂՀ կրծողների ֆաունայում առ այսօր հայտնաբերվել է ճագարամկների 2 տեսակ Allactaga williamsi Thomas, 1897 և Allactaga elater Lichtensteni, 1825, որոնք տարածված են Մարտակերտի, Մարտունու և Հադրութի կիսաանապատային գոտում: Պարզաբանված է նաև նրանց էկոլոգիական և վարքագծային առանձնահատկությունների որոշ հարցեր:

Резюме

В результате исследования фауны грызунов НКР на сегодняшний день были выявлены тушканчики двух видов: Allactaga williamsi Thomas, 1897 и Allactaga elater Lichtensteni, 1825, которые распространены в полупустынной зоне Мартакертского, Мартунинского и Гадрудского районов.

Были выяснены также некоторые вопросы, касающиеся их экологических и этологических особенностей.

Գրականություն

1.Յավրոյան Է. Գ.,Հայրապետյան Վ. Տ., Ղարաբաղի վայրի կաթնասուններ, Ստեփանակերտ, 2003թ.:

2.Наумов Н. Я., Россолимо О. Л., Систематика млекопитающих СССР, Моск., изд., МГУ, 1987.

3.Наумов Н. Я., Россолимо О. Л., Разнообразие млекопитающих , по материал. экспоз. зоол. музея, МГУ, изд. МГУ, 1997.

4.Соколов В. Е., Систематика млекопитающих , Моск., "Высшая школа", 1977.